14884

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«17» 11 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0173-22

Ձեռնարկողը՝ **«ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԵՋՈՒՐ» ՓԲԸ**
ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Ծովակալ Իսակովի /8

Գործունեությունը՝ **Վայոց ձորի մարզի Ջերմուկի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի «Պուճուր գետ» տեղամասի թիվ 1/09 հորատանցքի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**
Վայոց ձորի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝

Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ №0173-22

<17> 11 2022թ.

«ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԵՋՈՒՐ» ՓԲԸ-ի Վայոց ձորի մարզի Ջերմուկի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի «Պուճուր գետ» տեղամասի թիվ 1/09 հորատանցքի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԵՋՈՒՐ» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/, նախագծային փաստաթղթեր
Տեղադրման վայրը՝	Վայոց ձորի մարզ, Ջերմուկ համայնք

Ներածական մաս. «ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԵՋՈՒՐ» ՓԲ ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/ 2013 թ-ից սկսած Ջերմուկի ածխաթթվային ստորերկրյա հանքային ջրերի «Պուճուր գետ» տեղամասի թիվ 1/09 հորատանցքից իրականացնում է հանքային ջրերի արդյունահանում և արդյունաբերական շշալցում /թիվ ՇԱԹՎ-29/123 ընդերքօգտագործման թույլտվության հիման վրա/: Ընկերության կողմից նախատեսում է ավելացնել արդյունահանման ծավալները՝ շշալցման նպատակով:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի դ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Ա» կատեգորիայի:

Նկարագրական մաս. Ջերմուկի ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրը գտնվում է Արփա գետի ձախ ափին, Վարդենիսի լեռնաշղթայի հարավային լանջի 2030-2040 մ բացարձակ բարձրությունների վրա: Տարածքը բնորոշվում է խիստ կտրտված, լեռնային ռելիեֆով: Հանքավայրի «Պուճուր գետ» տեղամասը Թիվ 1/09 հորատանցքը գտնվում է Վայոց Ձորի մարզի Ջերմուկ քաղաքի վարչական տարածքում՝ Կեչուտ գյուղից 0.3 կմ հյուսիս-արևելք ուղղությամբ: Հորատանցքից մոտ 11 մ հեռավորությամբ հոսում է Արփա գետի «Պուճուրգետ» վտակը: Ընկերության կողմից արդյունահանվող 1/09 հորատանցքն ինքնաշատրվանող է, հորատանցքը գործող սանիտարական նորմերին համապատասխան կահավորված է համապատասխան սարքավորումներով: Շահագործվող հանքային ջրերի տեղամասն իր բոլոր ենթակառուցվածքներով զբաղեցնում է 1.2257 հա մակերես: Հանքավայրի տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող տարածքների, կամ անտառային տարածքների հետ:

Ընկերության կողմից արդյունահանվող «Պուճուր գետ» տեղամասի 1/09 հորատանցքի տարածքի բեկման կետերի կոորդինատները՝ WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով հետևյալն են՝ X=8558137.9530, Y=4408401.8330:

Հիդրոերկրաբանական որոնողական աշխատանքների արդյունքներով /որը տեղամասում իրականացվել է 2008-2009 թթ./ պարզվել է, որ «Պուճուրգետ»-ի տեղամասում հանքայնացումը տատանվում է 4.6-5.2գ/լ սահմաններում: Տեղամասի

ածխաթթվային հանքային ջրերը պատկանում են «Ջերմուկ»-ի տիպին և օգտագործվում են միայն շշալցման նպատակով՝ որպես խմելու բնական, բուժիչ հանքային ջուր: Ստորերկրյա ջրերի ռեժիմը տարեկան կտրվածքում արտահայտվում է ծախսի, ջերմաստիճանի և քիմիական կազմի կայունությամբ:

Ջերմուկի ածխաթթվային հանքային ջրի «Պուճուր գետ» տեղամասի պաշարները՝ 2009 թ-ի դեկտեմբերի 28-ին, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի օգտակար հանածոների պաշարների գործակալության թիվ 238 որոշման համաձայն հաստատվել են հետևյալ ծավալներով.

Հանքային ջրի տիպը	Հանքայնացումը, գ/լ	Լուծված ածխաթթու գազի պարունակությունը, մգ/լ	Հորատանցքի համարը	Պաշարների կարգը	Պաշարները	
					լ/վրկ	մ³/օր
Հիդրոկարբոնատ-սուլֆատային, նատրիում-կալցիումային	4.3-4.7	1400-1500	N 1/09	B	0.60	51.84
			N 2/09	C_1	0.21	18.14
$B+C_1$					0.81	69.98

Հաստատված պաշարները վերագրվել են բնական բուժիչ-սեղանի հանքային ջրերին (ՀՍ 191-2000) և թույլատրելի են համարվել շշալցման համար: Միևնույն ժամանակ C_1 կարգի պաշարները վերագրվել են պահուստայինների շարքին և դրանց շահագործումը նպատակահարմար է համարվել միայն 1/09 հորատանցքի վթարային իրավիճակներում: «Երևանի Գարեջուր» Ընկերությունը հանքային ջրի արդյունահանումն իրականացրել է միայն Ջերմուկի ածխաթթվային ստորերկրյա հանքավայրի «Պուճուր գետ» տեղամասի թիվ 1/09 հորատանցքից:

Ընկերությանը տրամադրված օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության (ՇԱԹՎ-29/123 տրվ. 12.10.2012թ) համաձայն՝ հանքային ջրերի տրամադրված պաշարներն ըստ կարգերի կազմել են՝ 25543.6մ³/տարի (որից՝ հորատանցք թիվ 1/09 - ըստ B կարգի՝ 18921,6 մ³/տարի, հորատանցք թիվ 2/09 - ըստ C_1 կարգի՝ 6622.0 մ³/տարի): Համաձայն 2016թ-ի հունիսի 12-ին տրամադրված արդյունահանման թույլտվության փոփոխության Ընկերությանն արդյունահանման նպատակով տրամադրվել է տարեկան 1500 մ³, ինչը կազմում է 1/09 հորատանցքի դեբիտի մոտ 7.9 %-ը: Հանքային ջրերի իրացումը արտահանման շուկաներում մեծացրել է արտադրանքի նկատմամբ պահանջարկը, ինչով պայմանավորված Ընկերությունը պետական լիազոր մարմնից նախաձեռնում է ստանալ արդյունահանման ծավալների ավելացման թույլտվություն /տարեկան արդյունահանվող ծավալները՝ ներկայիս 1500 մ³/-ի փոխարեն հասցնելով 11500 մ³/, ինչը կբավարարի Ընկերության պահանջարկը և ՀՀ տնտեսությանը կապահովվի լրացուցիչ հարկային եկամուտ:

Գործարանն իր ամբողջ գործունեության համար անհրաժեշտ ածխաթթու գազը արտադրում է Երևանում և նախագծի իրականացման արդյունքում /ընդլայնում/ ածխաթթու գազի կորզում չի նախատեսվում: Շշալցման նպատակով պահանջվող նախագծային ջրաքանակը՝ կազմում է 11500մ³/տարի կամ 0.365 լ/վրկ: Արդյունահանվող հանքային ջուրը Ընկերության գործող արտադրամաս կտեղափոխվի հատուկ ջրատար մեքենաներով: Շշալցման աշխատանքները ինչպես ներկայում, այնպես էլ արդյունահանման ծավալների ավելացման դեպքում կիրականացվեն Երևանում գտնվող գործարանում, որտեղ տեխնոլոգիական գործընթացների փոփոխություններ չեն նախատեսվում:

Երևանի գարեջրի գործարանը բաղկացած է շալցման, տարայավորման, գարեջրի եփման, մեխանիկական, ածխաթթու գազի արտադրամասերից, ածիկի ընդունման բունկերից, գարեջրի հնեցման և ասեպտիկայի բաժանմունքներից, վարչական մասնաշենքից, ջրհավաք ավազանից, էլ. ենթակայանից, պահեստներից, սառնարանից, կաթսայատնից, պոմպակայանից և այլ օժանդակ շինություններից: Գործարանի սեփական կաթսայատունն ապահովում է ամբողջ գործարանի արտադրատարածքների, օժանդակ և վարչական մասնաշենքերի կենտրոնացված ջեռուցումը:

Ընկերության արտադրանքների շալցումն իրականացվում է 4 հիմնական մասնաշենքերում.

- Գարեջրի շալցման արտադրամաս - 4050 մ^2,
- Բնական հյութերի արտադրամաս - 1900 մ^2,
- Ոչ ալկոհոլային խմիչքների արտադամաս (այդ թվում՝ հանքային ջուր) - 1630 մ^2,
- Գլխավոր արտադրական շենք (մուրաբաներ, ջեմեր, կոմպոտներ) - 2250 մ2:

«Երևանի գարեջուր» ՓԲԸ-ի տարածքում առկա է իտալական, գերմանական, ավստրիական և ռուսական արտադրությունների թվով 8 հոսքագծեր, որոնց ընդհանուր արտադրողականությունը կազմում է մինչև 87000 շիշ (տարա)/ժամ:

Հանքային ջրերի արտադրությունը բաղկացած է 2 իտալական և գերմանական ավտոմատ կառավարվող հոսքագծերից, համապատասխանաբար՝ 3000 և 6000 շիշ/ժամ արտադրողականություններով: Հանքային ջուրը պլաստիկ շշերով /0,33լ, 0,5լ, 1լ, 1,5լ և 2,0լ տարողություններով/ 3000.0 շիշ/ժամ արտադրողականությամբ շալցվում է իտալական «Kosme» 3Bloc PET հոսքագծով, իսկ ապակե շշերով /0.33-0.5լ տարողությամբ/ 6000 շիշ/ժամ արտադրողականությամբ շալցվում է գերմանական «Krones» հոսքագծով:

Հանքային ջրերի շալցման արտադրամասը տեղակայված է քառահարկ արտադրամասի 1-ին հարկում և բաղկացած է հետևյալ տարածքներից (տեղամասերից).

1. Հանքային ջրի ընդունման և կուտակման տեղամաս՝ ուր ցիստեռն բեռնատարով տեղափոխվում է 1/09 հորատանցքից արդյունահանված հանքային ջուրը,
2. Հանքային ջրի ֆիլտրացման տեղամաս, որտեղ իրականացվում է ֆիլտրացիա,
3. Ածխաթթու գազի տեղամաս,
4. Ապակի շշերով հանքային ջրի շալցման արտադրամաս,
5. Պլաստիկ շշերով հանքային ջրի շալցման արտադրամաս:

Արդեն շալցված և փաթեթավորված հանքային ջուրը տեղափոխվում է Ընկերության պատրաստի արտադրանքի պահեստ: Ընկերության վերը թվարկված բոլոր շինությունները, ենթակառուցվածքները և հոսքագծերը և դրանց արտադրական հզորությունները թույլ են տալիս շալցնել և տարայավորել սույն նախագծով նախատեսված 11500մ^3/տարի կամ 0.365 լ/վրկ ծավալներով հանքային ջուր և մինչև 87000 շիշ(տարա)/ժամ արտադրանք:

Շշալցման գործընթացը կատարվում է հետևյալ հերթականությամբ.

- պրեֆորմաների բեռնում շշափչման համակարգ,
- պրեֆորմաների տաքացում, ֆորմաների հովացում և շշափչում՝ 3000 շիշ/ժամ արտադրողականությամբ շշափչման մեքենայով,
- արտադրանքի գազավորում՝ «Innopro Paramix C/19/T30-10» մակնիշի մեքենայով:
- փակ համակարգով շշերի տեղափոխում շալցնող մեքենա, որտեղ և խցանավորվում են,

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- ավտոմատ հոսքագծերի միջոցով շալցված և խցանավորված արտադրանքի տեղափոխում կոդավորման և ժամկետավորման ցիկլ, որտեղ ստուգվում է նաև լցվածությունը և խցանի առկայությունը,
- արտադրանքի պիտակավորում՝ 5000.0 շիշ/ժամ արագությամբ «Innoket NEO 1RF» մակնիշի մեքենայով:
- հանքային ջրի շշերի մեքենայացված փաթեթավորում և արկղերի մեքենայացված պալետավորում:

Ապակյա շշերով շալցումը կատարվում է ժամանակակից հոսքագծի միջոցով: Հոսքագծի արտադրողականություն 6000.0 շիշ/ժամ է /0.5 և 0.33 լիտրանոց տարաներով/:

Երկու հերթափոխով աշխատելու դեպքում տարեկան ծավալները 0.5 լիտրաանոց շալցման դեպքում կկազմի՝ 14640.0 մ³ և 0.33 լիտրանոց շալցման դեպքում՝ 9662.4 մ³:

Շշալցման գործընթացը կատարվում է հետևյալ հերթականությամբ.

- դատարկ շշերի ավտոմատ լվացում, տեղափոխում, ցայում,
- հանքային ջրի ավտոմատ շալցում և խցանավորում,
- արտադրանքի կոդավորմում՝ Videojet մակնիշի մեքենայի միջոցով:
- լցված շշերի շալցման որակի ստուգում, որտեղ խոտանաված շշերը դուրս են բերվում գործընթացից:
- արտադրանքի պիտակավորում, պատրաստի արտադրանքի փաթեթավորում և պահեստավորում:

Հանքային ջրերի հոսքագծերի հզորությունները, ինչպես նաև Ընկերության գործարանի արտադրական և վարչատնտեսական ռեսուրսները թույլ է տալիս 11500 մ³/տարի հանքային ջուր արդյունահանելու թույլտվություն ստանալու դեպքում շալցնել ողջ ծավալը: Շշալցման գործարանի գործունեության ընթացում գոյացած կոմունալ-կենցաղային կեղտաջրերը և արտադրական հոսքաջրերն ուղղվում են դեպի Երևանի կոյուղու կոլեկտոր:

Արտադրական գործընթացում առաջացող թափոնների որակական կազմը և կառավարման եղանակները նախագծի իրականացման արդյունքում չեն փոխվում: Թափոնները ներկայացված են հետևյալ տեսակներով, այդ թվում՝ աղտոտված ապակու ջարդոն, բանեցված օդաճնշիչ դողեր, յուղոտված լաթեր, իրենց սպառողական հատկությունները կորցրած ավտոմոբիլային յուղերի մնացորդներ, բանեցված կապարե կուտակիչներ և խոտան, կարծրացած տարասեռ պլաստմասսաների խառնուրդներ և այլն: ՇՄԱԳում ներկայացվել է դրանց քանակների, տեղադրման և հեռացման լուծումների վերաբերյալ տեղեկատվություն:

Հանքային ջրի արդյունահանման և վերջինիս Երևան քաղաք տեղափոխման և շալցման համար Ընկերությունն օգտվում է գոյություն ունեցող՝ Ջերմուկ-Երևան ավտոճանապարհից, ենթակառուցվածքներից (էլեկտրահաղորդման գծեր, գազատար, ջրի և կոյուղու գծեր): Հանքային ջրի շալցման ծավալների ավելացման համար նոր օժանդակ շինությունների կառուցում և շինարարական աշխատանքների իրականացում չի նախատեսվում: Հորատանցքի տեխնիկական սարքավորումներով կահավորումն իրականացվել է հանքային ջրի արդյունահանման ծավալների ավելացման պահուստով, ինչի պատճառով խողովակաշարի տրամագծի փոփոխություն, հանքային ջրի կուտակման տարաների ավելացում, ջրահաշվիչ սարքերի և պոմպերի փոփոխություն չի նախատեսվում:

Ելնելով թիվ 1/09 և 2/09 հորատանցքերի գտնվելու վայրի ռելիեֆային պայմաններից, ջրհավաք հորատանցքը իր գլխամասային սարքավորումներով շրջափակված է մետաղական ցանկապատով (սանիտարական պահպանության առաջին խիստ ռեժիմի գոտիով) որն ունի 4*15 մ պարագիծ, մուտքի դռնակ: Կատարվել է ջրհավաք հորատանցքի հիդրոիզոլյացիա՝ բացառելու նպատակով մակերևութային աղտոտված ջրերի մուտքը հորատանցք: Հորատանցքը կահավորված է երկու՝ առաջնային և տեխնիկական СПВГ մակնիշի 80 մմ տրամագծով ջրաչափերով: Առաջնային ջրաչափը տեղադրված է գազանջատիչ սարքավորումից անմիջապես հետո, իսկ տեխնիկականը՝ ջրհեռացման կամ թողքի խողովակի վրա:

1/09 հորատանցքից հանքային ջուրը ինքնահոսով անցնում է չժանգոտվող պողպատից պատրաստված գազանջատիչ սաքավորում, որտեղից լցվում ռեժիմային դիտարկումների համար նախատեսված և չժանգոտվող պողպատից պատրաստված 2 մ^3 ծավալով չափման բակ, այնուհետև արդեն ամբողջապես գազանջատված վիճակում հանքային ջուրը՝ 120 մմ տրամագծով և 241 մ երկարությամբ սննդային պլաստիկ խողովակաշարով ինքնահոսով հոսում է դեպի հանքային ջրի կուտակման չժանգոտվող պողպատից պատրաստված՝ 20 և 16 մ^3 ծավալներով բակեր, որտեղից տեղափոխվում է Երևանում տեղակայված գործարան՝ շշալցման նպատակով:

Գործունեության իրականացումը չի ուղեկցվում ընդերքօգտագործման թափոնների, վնասակար արտանետումների, ինչպես նաև վտանգավոր արտադրական հոսքաջրերի առաջացմամբ և դրանով պայմանավորված ջրային ռեսուրսների աղտոտմամբ: Արփա գետի ավազանում /«Պուճուր գետ» հանքային ջրի տեղամասի սնման և բեռնաթափման վայրերում/, ինչպես նաև շրջակա տարածքներում հորատանցքերի շահագործման ընթացքում կբացառվեն գործունեության իրականացման արդյունքում հնարավոր աղտոտումները՝ ջրային և հողային ռեսուրսների վրա: Ինքնաշատրվանող հորատանցքից հանքային ջրերի արդյունահանման ծավալների ավելացմամբ պայմանավորված հանքային ջրի ծավալները կնվազեն 0,365լ/վրկ ծավալով /հակառակ դեպքում ինքնաշատրվանող հոսքի չօգտագործվող ծավալը կհոսի հորատանցքի հարևանությամբ գտնվող գետակ/:

Հանքային ջրի հանքավայրի արդյունավետ և երկարաժամկետ շահագործումը (արդեն իսկ շահագործվում է 8 տարի) հնարավոր է եղել միայն հորատանցքի լավ տեխնիկական վիճակի, գլխամասային սարքավորումների, չափիչ սարքերի, ինչպես նաև սանիտարական պահպանության գոտու առկայության և պատշաճ վիճակում պահելու պայմաններում: Շահագործմանը զուգընթաց Ընկերության կողմից շարունակական կիրականացվի ստացիոնար ռեժիմային դիտարկումներ՝ հետևելու նպատակով տորերկրյա ջրերի ծախսը (դեբիտ), ջերմաստիճանը և քիմիական կազմի փոփոխությունները և անհրաժեշտության դեպքում ձեռնարկել համապատասխան միջոցառումներ:

Հանքավայրի հանքային ջրի արդյունահանման ժամկետը լրանալուց հետո, ջրհավաք հորատանցքի փականը կփակվի, կկապարակնքվի, դրանով իսկ հանքավայրը կկոնսերվացվի՝ ապամոնտաժելով հորատանցքերի կապտաժները: Հանքի փակումից հետո իրականացվելու է խախտված տարածքների ռեկուլտիվացիա՝ ՀՀ կառավարության 14.12.2017թ. թիվ 1643-Ն որոշման պահանջների համապատասխան:

Ընդհանուր առմամբ լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի կենթարկվեն հորատանցքից մինչև կուտակման բաքեր ընկած խողովակաշարի տարածքը /96.4 մ^2/, կուտակման բաքերի տարածքը /225մ^2/ և հորատանցքին մոտեցող գրունտային

ճանապարհները /1205մ²/: 1205մ² մակերեսով տարածքում կիրականացվի նաև կենսաբանական ռեկուլտիվացիա: Խախտված հողատարածությունների լեռնատեխնիկական վերականգնման խոշորացված հաշվարկը գնահատվել է 2,462.8 հազ. ՀՀ դրամ, իսկ կենսաբանական վերականգնմանը՝ 30.000 ՀՀ դրամ: Ընդամենը ռեկուլտիվացիոն ծախսերը կկազմեն՝ 2,462.8+30.0 = 2,492.8 հազ. դրամ:

Շահագործման ընթացքում Ընկերության կողմից իրականացվելու է 3 տեսակի մշտադիտարկումներ /դիտարկվելու են՝ Պուճուր գետի ջուրը, հողային ծածկույթը և մթնոլորտային օդը/: Մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է հատկացնել տարեկան 300.0 հազ. ՀՀ դրամ:

Եզրափակիչ մաս: Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջներով: Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, արտակարգ իրավիճակների նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Վայոց ձորի մարզպետարանը և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներ, որոնց կողմից ներկայացված դիտողությունները և առաջարկությունները ևս հաշվի են առնվել հաշվետվության լրամշակումներում:

Գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Ջերմուկի ածխաթթվային ստորերկրյա հանքային ջրերի «Պուճուր գետ» տեղամասի թիվ 1/09 հորատանցքի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ Ջերմուկ համայնքում անցկացվել են հանրային քննարկումներ /չորս քննարկում/: Ընկերությունը ազդակիր բնակչության համար սոցիալական ծրագրեր իրականացնելու նպատակով, իր պատրաստակամությունն է հայտնել հանդիպելու Ջերմուկի համայնքապետարանի հետ: Սոցիալական ծրագրերի իրականացման նպատակով Ընկերության կողմից նախատեսում է Ջերմուկ համայնքի բյուջե հատկացնել տարեկան շուրջ 400000 ՀՀ դրամ, ինչը կուղղվի կրթական կազմակերպություններին՝ գույքային կամ նյութական օժանդակության ձևով:

Ելնելով վերոգրյալից կարելի է եզրահանգել, որ նախագծի իրականացումը չի ավելացնի լրացուցիչ բնապահպանական ծանրաբեռնվածություն շրջակա միջավայրի բաղադրիչների վրա, քանի որ հանքային ջրի ծավալների ավելացման և շշալցման համար նոր շինարարական աշխատանքների իրականացում և արտադրական գործընթացների փոփոխություն չեն նախատեսվում: Ընկերությունը ստանալով Ջերմուկի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1/09 հորատանցքից հանքային ջրի արդյունահանման ծավալների ավելացման իրավունք, դրանով իսկ կապահովի շուկայի պահանջարկը հանքային ջրի նկատմամբ, իսկ Ջերմուկ համայնքում սոցիալական ծրագրերի իրականացումը կնպաստի բնակչության սոցիալական պայմանների բարելավմանը և բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

Փորձաքննական պահանջներ

1. «ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԵՋՈՒՐ» ՓԲ ընկերության կողմից նախատեսվող Ջերմուկի ածխաթթվային ստորերկրյա հանքային ջրերի «Պուճուր գետ» տեղամասի թիվ

1/09 հորատանցքի արդյունահանման և հանքային ջրի շշալցման նպատակով անհրաժեշտ է առաջնորդվել՝

- Ընդերքի մասին օրենսգրքի 67-րդ հոդվածի և ՀՀ առողջապահության նախարարի 2002թ. նոյեմբերի 29-ի N 803 հրամանի պահանջներով՝ սանիտարական պահպանման առաջին գոտու սահմաններում հորատանցքը աղտոտումից զերծ պահելու նպատակով,
- ՀՀ առողջապահության նախարարի մարտի 10-ի 2003թ. N 137 հրամանի՝ խմելու հանքային ջրերի մշակմանը և շշալցմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներով,
- ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 22-ի N 1484-Ն որոշման պահանջներով՝ հանքային ջրի արդյունահանումը հաստատված պաշարների քանակին, որակին և ռեժիմին համապատասխան իրականացնելու նպատակով,
- ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշման պահանջներով:

2.Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել Ջերմուկ համայնքում Ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԵՋՈՒՐ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Վայոց ձորի մարզի Ջերմուկի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի «Պուճուր գետ» տեղամասի թիվ 1/09 հորատանցքի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Մկրտչյան